

րէն լեզուներով, իր սեպհական մամուլին միջոցաւ: 1906 ին Պուքրէշի ցուցահանդէսին մէջ ստացած է արծաթեայ մետալ և Յոբելեարի շքանշան մը:

ՂԸՅՄԱԹ ՍԿԻՒՏԱՐՅԻ.— Գրիգոր Պարք. Պարոնտէրի օրով Ս. Յակոբի վանքին կը նուիրէ այգի մը, Սկիւտարի մէջ. եւ կենդանութեանը նոյն այգիին արդիւնքը կը զրկէ Երուսաղէմ. այս այգին կից էր Հայոց գերեզմանատան: Մարտիրոս պարք. Կաֆացիին հիմնած և Գրիգոր պարք. Շղթայակրին 1726 ին ընդարձակած Հոգեւոր շինուած էր այս այգիին մէջ, ուր յետոյ կառուցուեցաւ Երուսաղէմի Ճեմարան Վարժարանը: Ղըյմաթ Սկիւտարցիին նուիրած այգիին վրայ հետզհետէ աւելցուած են ուրիշ գետիներ:

ՂԸՐԽԵԱԼԱՆ ՄԵԼԻՔ, ՋՈՒՂԱՅԵՑԻ.— Կ'ապրէր Շահաբաս Ա.ի օրով, արքունի հրամանով հայ ժողովրդեան մէկ մասին վրայ կը հսկէր Շահաբասեան տարագրութեան ժամանակ (1606-1613). Ղըրխեալան հաւատուրաց եղաւ Ջուղայի մէջ և յետոյ զղջալով՝ Երուսաղէմ գացած է ապաշխարութեան համար, Առաքել պատմիչ հետեւեալ կերպով կը գրէ (էջ 162) անոր մասին. «... իսկ խղճմտանք Ղըրխեալան մէլիքին առաւել ստղտեալ յանդիմանեաց զնա. որ և զկնի ամաց ինչ անցանելով. էս ու զկին իւր երիւք ինչ պատճառանօք. թէ գնամ ի Գալիէժ. և անցեալ զայնու՝ զնաց յԵրուսաղէմ. կատարեաց զամենայն ուխտ տնօրինականացն Քրիստոսի. և մնացին անդէն և կինն իւր. եւ վասն զի արուեստիւ քարագործ էր, վասն սը Երուսաղէմայ գործէր առանց վարձու. ակն ունելով ի Տեառնէ վարձուցն հատուցման և զամենայն ժամանակս կենաց իւրոց զորս եկաց, և անդէն ի քաղաքի Երուսաղէմ վախճանեցան և թաղեցան Ղըրխեալան մէլիքն և կինն իւր.»

ՂՈՒԿԱՍ ԴՊԻՐ.— 1691 ին Ս. Յակոբի մէջ ընդօրինակած է Տաթևացի Գրիգոր վրդ.ի Հարցմանց գիրքը. (էջմ. Յոց. Թ. 838, էջ 50). 1683 ին ալ ձստընձիր մը՝ Սահակ եպս. Ամասիացիին համար. (ՄՁ. Թ. 918):

ՂՈՒԿԱՍ ԵՊՍ. ՊԱՐՈՆՏԷՐ.— Մը. 1619 ին Ն. Լեհահայոց, Գրիգոր պարք.ի օրով. Թալասու Ս. Աստուածածին եկեղեցիին Տեսութիւն ի գիրս Պորփիրի ձեռագիրին մէկ յիշատակարանին